ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ՋՈՒՐԸ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՌԵՍՈՒՐՍ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Միավորված ազգերի կազմակերպության տվյալներով երկրագնդի ողջ ջրային պաշարների ինն տասնյոթ տոկոսը կազմում են համաշխարհային օվկիանոսի աղահամ ջրերը: Քաղցրահամ ջրերը կազմում են մոլորակի ողջ ջրային պաշարների երեք տոկոսը, որի 2/3-ը Արկտիկայի և Անտարկտիկայի հավերժական սառույցներն են և մարդկությանը տեխնոլոգիապես անհասանելի ստորգետնյա ջրերը[1]: Իր կենսագործունեությունն ապահովելու համար մարդկությանը, փաստորեն, բաժին է ընկած մոլորակի ողջ ջրային պաշարների ընդամենը մեկ տոկոսը:

Ջրի խնդիրը երկրագնդի տարբեր աշխարհամասերում նախևառաջ պայմանավորված է ջրի աշխարհագրական անհավասարաչափ բաշխվածությամբ և ջրային ռեսուրսների ու բնակչության թվի անհամաչափ հարաբերակցությամբ: Ըստ Համաշխարհային բանկի տվյալների, Մերձավոր Արևելքին և Հյուսիսային Աֆրիկային բաժին է ընկած երկրագնդի ջրային պաշարների ընդամենը մեկ տոկոսը, մինչդեռ այստեղ ապրում է մոլորակի բնակչության շուրջ հինգ տոկոսը[2]: Պայմանավորված այս հանգամանքով, ինչպես նաև տարածաշրջանային մակրոտնտեսական և աշխարհաքաղաքական զարգացումներով՝ Մերձավոր Արևելքը հանդիսանում է ջրի խնդրի կիզակետը: Ջրի աղբյուրների սակավությունը, խիտ բնակչությունը և բնակչության աճի բարձր տեմպը, տնտեսական և տեխնոլոգիական հետամնացությունը և առկա ջրային պաշարներն օպտիմալ օգտագործելու անկարողությունը, տարածաշրջանային հարատև կոնֆլիկտներն ու պետությունների միջև փոխադարձ անվստահությունը, Մերձավոր Արևելքի հիմնական գետերի սնման շրջանին տիրապետող երկրների միջև ջրօգտագործումը կարգավորող բազմակողմ համաձայնագրերի բացակայությունը և միջազգային իրավունքի անկատարությունը,- այս բոլորը այն հիմնական պատճառներն են, որոնք ընկած են մերձավորարևելյան ջրի հիմնախնդրի հիմքում: Հիմնախնդրի սրությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ արաբական

երկրներ մտնող ջրերի շուրջ ութսունհինգ տոկոսը գալիս է ոչ արաբական վերին հոսանքի երկրներից:

Մերձավոր Արևելքում ջուրը տարածաշրջանային քաղաքականության կարևորագույն գործոնն է, և տեղին է այն ասույթը, որ նա, ով վերահսկում է ջրերն ու նրանց բաշխումը Մերձավոր Արևելքում, կարող է տիրել այս տարածաշրջանին և նրա հարստություններին[4]: Եթե նավթը՝ տարածաշրջանի ամենաառատ բնական ռեսուրսը, որպես աշխարհաքաղաքականության գործիք վճռական ազդեցություն ունի համաշխարհային տնտեսական համակարգի, հետևապես՝ նաև միջազգային հարաբերությունների վրա ողջ աշխարհում, ապա ջուրը՝ տարածաշրջանի ամենասակավ բնական հարստությունը, ավելի որոշակիորեն է պայմանավորում տարածաշրջանային հարաբերությունները, քան՝ նավթը: Ջրի՝ որպես կենսական ռեսուրսի անհրաժեշտությունը ուղղակի և ծայրահեղ ազդեցություն է ունեցել և ունի տարածաշրջանի պետությունների փոխհարաբերություններում և նրանց արտաքին քաղաքականության ձևավորման գործում: Այս երևույթն ընդունված է անվանել ջրի դիվանագիտություն[5]: Ջուրն այնքան կենսական է երկրագնդի այս ամենաբորբոք տարածաշրջանում, որ այն կարող է երբեմնի թշնամիներին տանել համագործակցության, ինչպես օրինակ՝ Հորդանանին ու Իսրայելին, կամ, ընդհակառակը, կարող է լուրջ տարաձայնություններ առաջ բերել միևնույն կուլտուրական ժառանգությունը կիսող և նմանատիպ քաղաքական վարչակարգեր ունեցող երկրների միջև, ինչպես օրինակ՝ Սիրիայի և Իրաքի, Հորդանանի ու Սաուդյան Արաբիայի: Հենրի Քիսինջերի բնութագրմամբ՝ Մերձավոր Արևելքը համաշխարհային քաղաքականության առանցքն է, և աշխարհի տնտեսապես զարգացած երկրները՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ, իրենց նավթային շահերի ոլորտը հանդիսացող այս տարածաշրջանում ձգտում են հասնել համապարփակ խաղաղության հաստատման, իսկ այս ճանապարհին ամենավիճահարույց խնդիրներից մեկը շարունակում է մնալ ջրի հիմնախնդիրը[6]. Թերևս այս հանգամանքով է բացատրվում Մերձավոր Արևելքի ջրի հիմնախնդրի ոչ միայն տարածաշրջանային, այլ նաև միջազգային քաղաքական մեծ հնչեղությունը:

Արաբա-իսրայելական հակամարտության ողջ ընթացքում ջուրը կենտրոնական տեղ է զբաղեցրել: Որպես քաղաքական հոսանք ձևավորման հենց սկզբից՝ սիոնիզմը հատուկ ուշադրություն էր դարձնում ջրի գործոնին՝ ձգտելով ստեղծվելիք հրեական պետության սահմանների մեջ ընդգրկել հարակից ջրային աղբյուրները: Առաջին աշխարհամարտի ավարտին արդեն սիոնիստները, հետամուտ լինելով Պաղեստինում հրեաների ազգային օջախ ստեղծելու Բալֆուրի հռչակագրի իրականացմանը, պահանջում էին, որ դաշնակից տերությունները Սայքս-Պի-

կոյի համաձայնագրով նախատեսված սահմանները փոփոխեն այնպես, որ Հորդանան գետն ու նրա վտակները, Լիտանի և Յարմուք գետերի ստորին հոսանքները, Լիբանանի և Սիրիայի հարավային շրջաններն ընդգրկվեն Պաղեստինում Հրեական ազգային օջախի սահմանների մեջ: Սիոնիստական շարժման առաջնորդ, հետագայում՝ Իսրայել պետության առաջին նախագահ Խայմ Վեյցմանը, այս հարցն իր նամակում բարձրացնում էր Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար լորդ Քերզոնի առջև 1920թ. Սան Ռեմոյի կոնֆերանսից առաջ: Նա գրում էր. «Համաձայնագրի նախագիծը, որ առաջարկել է Ֆրանսիան, ոչ միայն Պաղեստինի մեջ չի ընդգրկում Լիտանի գետը, այլև Պաղեստինին զրկում է Հորդանան գետի աղբյուրներից, Գալիլիայի ծովի արևելյան ափից և Յարմուքի ողջ հովտից՝ Սայքս-Պիկոյի գծից հյուսիս: Ես միանգամայն համոզված եմ, որ Դուք տեղյակ եք ակնկալվող այն վատ ապագային, որ Հրեաների ազգային օջախը կունենա, եթե այդ առաջարկությունն իրականացվի: Դուք նաև գիտեք Լիտանի գետի, Հորդանան գետի և նրա վտակների, ինչպես նաև Յարմուք գետի կարևորությունը Պաղեստինի համար»: Երբ սիոնիստներին չհաջողվեց իրականացնել Լիտանի և Հորդանան գետերի ակունքների «անվտանգության ապահովումը», նրանք փորձեցին բնակավայրեր հիմնել Սիրիայում և Լիբանանում, սակայն ֆրանսիացիների ընդդիմությունը խոչընդոտեց նրանց նաև այս փորձերը[8]: Այդուհանդերձ հրեաներին հաջողվեց շրջանում իրականացնել հիդրոլոգիական հետազոտություն և գնահատում, և մի շարք առաջարկված հետազոտություններից ընդունվեց Լյադերմիլքի պլանը, որը նախատեսում էր հյուսիսային Պաղեստինը և Հորդանանի հովիտը ոռոգելու համար օգտագործել Հորդանան, Յարմուք, Դան, Բանիաս, Հասբանի և Զուրքա գետերի ջրերը, ինչպես նաև հարավային Լիբանանում Լիտանի գետի խոռոչմամբ՝ հյուսիսային Պաղեստինում ստեղծել արհեստական լիճ, որտեղից ջուրը կմղվեր հարավ՝ ոռոգելու համար Նեգեվի անապատը[9]:

Իսրայել պետության ստեղծումից սկսած՝ ավելի քան կես դար արաբա-իսրայելական հարաբերություններում ջուրը հանդես է եկել որպես այդ հարաբերությունները պայմանավորող կարևորագույն գործոններից մեկը: Ջրի գործոնն իր ծայրահեղ ազդեցությունն է ունեցել 1967թ. և 1973թ. արբա-իսրայելական պատերազմներում, 1978թ. Քեմփ Դևիդի եգիպտա-իսրայելական բանակցություններում, 1978թ. և 1982թ. Իսրայելի՝ Լիբանան ներխուժման ժամանակ, 1994թ. հորդանանա-իսրայելական հաշտության պայմանագրում և, ընդհանրապես, Իսրայելի՝ բոլոր հարևանների հետ ունեցած հարաբերություններում: Երբ 1979թ. Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթը ստորագրեց Իսրայելի հետ հաշտության պայմանագիրը, նա հայտարարեց, որ ջրից բացի ոչ մի ուրիշ բանի

համար Եգիպտոսն այլևս պատերազմի չի գնա ընդդեմ իր հարևանների: Հորդանանի Հուսեյն թագավորն իր հերթին 1994թ. հայտարարեց, որ ինքը չի պատերազմի Իսրայելի դեմ, բացառությամբ՝ ջրի համար, իսկ ՍԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Բուտրոս-Ղալին զգուշացնում էր, որ հաջորդ պատերազմը Մերձավոր Արևելքում լինելու է ջրի համար[10]:

Ջրի աղբյուրների շուրջ հակամարտությունները Մերձավոր Արևելքում արտահայտվում են երկու ձևով. հակամարտություն է ստեղծվում այն դեպքում, երբ գետափնյա երկրներից մեկը անարդար ձևով է շահագործում իր տարածքից ներս գտնվող գետահոսքի հատվածը՝ զգալի վնաս հասցնելով գետափնյա մյուս երկրներին, կամ այն դեպքում, երբ այդ երկրներից մեկը ռազմական գործողության միջոցով ընդլայնում է իրեն պատկանող գետավազանի տարածքը՝ ավելի շատ ջուր ստանալու նպատակով[11]: Ի տարբերություն տարածաշրջանի մյուս՝ սահմանային, տարածքային, էթնիկական, գաղափարական և կրոնական հակամարտությունների, ջրի շուրջ գոյություն ունեցող հակամարտությունները հղի են լայնամասշտաբ ռազմական գործողությունների սկսման վտանգով: Այդ վտանգն առկա է Մերձավոր Արևելքի երեք հիմնական գետավազանների՝ Եփրատ-Տիգրիսի, Հորդանանի և Նեղոսի գետավազանների շրջանում: Եփրատի ջրերից օգտվելու և ջրաբաժանման շուրջ տարաձայնությունները գետափնյա երկրների միջև վերջին տասնամյակների ընթացքում քանիցս արդեն սպառնացել են վերածել պատերազմի: Սկսած 1950-ական թվականներից, երբ Թուրքիան և Սիրիան սկսեցին ջրային ծրագրեր իրականացնել Եփրատ գետի վրա և հատկապես 1970-ական թվականներին, երբ այդ ծրագրերը սկսեցին կրել ավելի խոշորամասշտաբ բնույթ, թուրք-սիրիա-իրաքյան փոխհարաբերություններում ջրի խնդիրը սկսեց ավելի ու ավելի առաջնային տեղ գրաղեցնել: 1975թ. կապված Սիրիայի կողմից դեպի Իրաք Եփրատի հոսքի նվազեցման հետ՝ սիրիա-իրաքյան հարաբերություններն այնքան սրվեցին, որ երկու երկրների միջև խզվեցին դիվանագիտական հարաբերությունները և ընդհատվեց օդային հաղորդակցությունը, և Սիրիան ստիպված էր Գոլանի բարձունքներից 40 հազար զինվոր տեղափոխել դեպի Իրաքի հետ իր հյուսիսային սահմանը, ինչը թուլացրեց սիրիա-իսրայելական ռազմաճակատը[12]: Ջրի խնդիրն այսօր այնքան ծայրահեղորեն է պայմանավորում սիրիա-թուրքական հարաբերությունները, որ Սիրիայի համար կարևորագույն այնպիսի մի խնդիր, ինչպիսին Ալեքսանդրետի սանջաքի թուրքական անեքսիան է, երկրորդ պլան է մղված: Նշենք նաև, որ Եփրատ և Տիգրիս գետերի ամենաստորին հոսանքից՝ Շատտ-ալ-Արաբ գետից օգտվելու շուրջ հակասությունը Իրաքի և Իրանի միջև 1980թ.

սկսված իրաք-իրանյան պատերազմի գլխավոր պատճառներից մեկն էր[13]:

Ներկայումս Թուրքիայի կողմից Եփրատ և Տիգրիս գետերի վրա իրականացվող հարավարևելյան Անատոլիայի շրջանի զարգացման GAP (Guneydogu Anadolu Projesi) ծրագիրը ենթադրում է ոչ միայն այդ երկրի տնտեսական և ներքին-քաղաքական խնդիրների լուծում, այլև՝ ստորին հոսանքի երկրների վրա քաղաքական ճնշման գործադրում, արաբական քաղաքականության վերահսկում և Արաբական թերակղզում Անկարայի դերակատարության ստանձնում: Թուրքիան ջրի ռազմավարական իր զենքը ցուցադրեց 1990թ., երբ GAP ծրագրի կորիզը կազմող Աթաթուրքի ջրամբարը լցնելու նպատակով շուրջ մեկ ամիս դադարեցրեց Եփրասի հոսքը դեպի Սիրիա:

Ի տարբերություն Եփրատ-Տիգրիսի ավազանի, որտեղ ստորին հոսանքի երկրներին՝ Սիրիային և Իրաքին, իր կամքն է փոխում թելադրել վերին հոսանքի երկիրը՝ Թուրքիան, Նեղուսի ավազանում «թելադրողի» դերում հանդես է գալիս ստորին հոսանքի երկիրը՝ Եգիպտոսը: Մակայն որքան որ Եգիպտոսը ռազմապես և տնտեսապես հզոր է Նեղոսի գետափնյա մյուս երկրներից, նույնքան և խոցելի է: Նեղոս գետի վերին հոսանքում որևէ ծրագրի իրականացում, որը կարող է ազդել դեպի հյուսիս հոսող ջրի քանակի և որակի վրա, ուղղակիորեն առնչվում է Եգիպտոսի տնտեսական բարեկեցության, ներքին քաղաքականության, միջազգային հարաբերությունների և ազգային անվտանգության հետ: Երկրագնդի վրա որևէ այլ երկիր ընդամենը մեկ գետից այնքան մեծ կախում, որքան Եգիպտոսը, չունի: Այդ իսկ պատճառով էլ Եգիպտոսի ներքին և արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրը շարունակում է մնալ Նեղոսի անվտանգության ապահովումը:

Մերձավոր Արևելքում ջրի հիմնախնդրի քաղաքական, տնտեսական և իրավական ասպեկտները սերտորեն և անխզելիորեն փոխկապված են: Առանց խնդրի իրավական լուծման, այսինքն՝ առանց Մերձավոր Արևելքի հիմնական գետերի սնման շրջանին տիրապետող երկրների միջև բազմակողմ համաձայնագրերի կնքման, հնարավոր չէ հասնել խնդրի քաղաքական և տնտեսական կարգավորման, ընդ որում խնդրին իրավական լուծում կարող է տրվել միայն այն ժամանակ, երբ դա պահանջեն գետափնյա երկրների տնտեսական և քաղաքական շահերը: Մերձավոր Արևելքում ջրի հիմնախնդրի քաղաքական կողմն ուսումնասիրելու համար կարևոր է անպայման անդրադառնալ խնդրի տնտեսական և իրավական կողմերին:

HARUTYUNYAN KAREN

WATER - THE MOST IMPORTANT RESOURCE IN THE MIDDLE EAST

(Summary)

As the 21st century evolves, researchers, security experts and policy-makers around the world try to identify the challenges that humanity will face in the present era. Among potential conflicts, they mention the religious, ethnic, racial, border and territorial conflicts. But most often they point out the conflicts that will arise over water.

Indeed, 97 per cent of all the water on earth is saline, hence unsuitable for drinking or growing crops. The remaining 3 per cent is fresh water, 2/3 of which is locked in Arctic and Antarctic ice caps. Humanity can utilize only 1 per cent of all water resources in the world, only 1 per cent of which the Middle East has access to, while having 5 per cent of world population. Here lies the core of Middle Eastern water issue. The acuteness of water issue in the Middle East is pertaining also to the region's macro-economic and geopolitical realities. Burgeoning populations, accompanied with urbanization and industrialization; economic and technological underdevelopment and inability to optimally use the available water resources; political antagonisms and lack of mutual trust between countries; absence of international multilateral agreements regulating water use and incompleteness of the law of international watercourses, - all these are making water a determining factor in regional politics. While oil, the richest resource of the region, impacts world economic and financial system, therefore, international relations throughout the world, water – the scarcest resource in the region, has critically shaped relations between regional countries. The Middle Eastern water issue has wide international resonance, as the developed countries of the world, led by the USA, strive to establish lasting peace in the region of their vital economic interests.

Political, economic and legal dimensions of Middle Eastern water issue are inextricably linked, and the political solution of the problem requires both economic and legal solutions, and vice versa.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Comprehensive Assessment of the Freshwater Resources of the World, *World Meteorological Organization/ United Nations Educational Scientific and Cultural Organization, 1992.*
2. From Scarcity to Security: Averting a Water Crisis in the Middle East and North Africa, *World Bank Report* (1996).
3. Նկատի են առնված նաև հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրները:
4. John Bulloch and Adel Darwish, *Water Wars: Coming Conflicts in the Middle East* (London, Victor Gollantz, 1993), p.161.
5. Mostafa Dolatyar, "Water Diplomacy in the Middle East," *The Iranian Journal of International Affairs*, Vol. VII, no 3, Autumn 1995.
6. Ալ-Իթթիհադ, 30.01.94, (արաբերեն):

7. Weisgall, M.W., ed., *The Letters and Papers of Chaim Weizman* (Jeusalem: Israel University Press, 1977), p. 36.
8. Nijim, B.K., "Water Resources in the History of Palestinian Conflict," *GeoJournal 21* (1990), pp. 317-323.
9. Lowdermilk, W.C., *Palestine, Land of Promise* (New York: Harper & Bros, 1944), p. 39.
10. Adel Darwish, "Water Wars: The Next Major Conflict in the Middle East," *Lecture given at the Geneva Conference on Environment and Quality of Life*, June 1994, www.mideastnews.com.
11. Ջիջիյան Վ., Ջրի դիվանագիտությունը Միջին Արևելքում, *Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի հրատարակություն*, Երևան, 1998, էջ 1:
12. Оганесян Н.О., Отношения Иракской Республики со странами Арабского Востока, Ереван, 1985, стр. 67.
13. Кальвокоресси П., Мировая политика после 1945 года, М., 2000, стр. 543.